

# ՆՈՐ β(Zr-Ti) ԶԱՄԱԶՈՒԼՎԱԾՔԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՅԱՏԱԿԱՆԸ ԴԵՆՏԱԼ ԻՄՊԼԱՏԱՑԻԱՅԻ ԶԱՄԱՐ

**Պոգորելով Մ.<sup>1</sup>, Միշեբեկ Օ.<sup>2</sup>, Չաթեպ Ն.<sup>1</sup>, Բաբոյ Ի.<sup>1</sup>, Նիկոլեև Ա.<sup>2</sup>**

<sup>1</sup>Սումի պետական համալսարան, Սումի, Ուկրաինա

<sup>2</sup>Չապորոժիեի պետական բժշկական համալսարան, Չապորոժիե, Ուկրաինա

Յանձնված է՝ 07/14/2014թ., ընդունված է 10/21/2014

Օստեոինտեգրումը հանդիսանում է ատամնաբուժական իմպլանտների ինտեգրացիայի հաջողության առանցքային գործոնը և կախված է ոսկորի հյուսվածքի որակից, առաջնային ֆիքսացիայի աստիճանից, չափազանց մեծ ծանրաբեռնվածությունից, պտուտակաձև մասի կամ ինքնին իմպլանտատի կոտրվածքից:

Այլ գործոնների շարքում, որոնք ազդում են օստեոինտեգրացիայի վրա, կարելի է տարբերակել (առանձնացնել) իմպլանտատի կազմությունը և նրա մակերևույթի մորֆոլոգիայի առանձնահատկությունները: Բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել Ti, Co, Ni և Z հիմքի վրա համալիր համաձուլվածքների առավելություններն իմպլանտացիայի արդյունքի վրա: Միաժամանակ անբավարար են ուսումնասիրված զուգորդված համաձուլվածքների կազմության ազդեցության մեխանիզմները, ինչպես նաև՝ ցիրկոնիումի հիմքի վրա համաձուլվածքների ազդեցությունը:

Մեր աշխատանքի նպատակն եղել է համեմատել β(Zr-Ti) համաձուլվածքի in-vivo հատկություններն՝ ավանդական TiVT-6 ստոմատոլոգիական իմպլանտատի հետ: Փորձում օգտագործվել է 30 ճազար, որոնց իմպլանտացրել են β(Zr-Ti) համաձուլվածք (փորձարարական խումբ) և TiVT6 ատամային իմպլանտատ (ստուգիչ) ազդրային ոսկորի դիստալ Էպիֆիզում: Իմպլանտացիայի 1, 3 և 6 ամիս հետո ոսկոր/իմպլանտատ մակերևույթում անցկացվել է անալիզ և իոնների (Ca և P) պարունակության հսկում, որը կատարվել է PEMMA-102 պատկերացանցային էլեկտրոնային միկրոսկոպի օգնությամբ (Սելմի, Ուկրաինա): TiVT6 իմպլանտատի կազմության շուրջ շարակցական հյուսվածքից ձևավորվում է «մանժետ», որը նույնիսկ վիրահատությունից 6 ամիս անց չի վերափոխվում ոսկրային հյուսվածքի: Այդ ժամանակ առաջանում է իմպլանտատի գերշարժունակություն և նրա վրայի ծանրաբեռնվածության մեծացում, միաժամանակ՝ շրջապատող ոսկորների վրա ծանրաբեռնվածության իջեցում, որը հետագայում կարող է ոսկրային հյուսվածքի կողմից բերել իմպլանտատի ֆունկցիայի խանգարման և բարդությունների: Միևնույն ժամանակ, վիրահատությունից հետո մեկ ամսվա ընթացքում փոփոխված մակերևույթով β(Zr-Ti)-ը պատվում է խոշոր թելավոր ոսկրային հյուսվածքով և իմպլանտացիայից 3 ամիս հետո վերածվում թիթեղավոր ոսկրային հյուսվածքի: Այսպիսով, β(Zr-Ti) համաձուլվածքն ունի առավելություններ որակյալ ատամային իմպլանտատի օգտագործման համար, շնորհիվ ոսկրային հյուսվածքի ձևավորման վրա խթանող ազդեցության: